ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ, 1 ՀՈՒԼԻՍԻ 2017Թ.
№ 24 (442)
www.syuniacyerkir.am

Ողջու կիրճով ո՛չ Պոմպեոսի բանակն է կարողացել անցնել, ո՛չ Շատոուի արքայինը...

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

ԼԵՎՈՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ. «...Մենք ունենք բոլոր հնարավոր միջոցները, որոնք թույլ են տալիս ոչ միայն զսպելու, այլեւ պատերազմի վերսկսման դեպքում հակառակորդին պարտադրելու մեր կամքը»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար Լեւոն Մնացականյանը

6

Գորիսն ապստամբության դրոշ է պարզել

Համայնքի ավագանին Սյունիքի մարզպետին կանչել է բացատրության եւ հաշվետվության

Իհարկե, տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությունն ուղղակի իրավունք չի վերապահում համայնքի ավագանուն՝ մարզպետին կանչելու բացատրության կամ հաշվետվության: Բայց ինքը՝ մարզպետը, ջանադրաբար սովորեցնում է բոլորին, թե ինչպես կարելի է անընդհատ շրջանցել օրենքն ու բարոյականության նորմերը: Մյուս կողմից՝ Գորիսում նույն մարզպետի եռանդուն ջանքով այնպիսի դրություն է ստեղծվել, ինչը չէր կարող ոչ ստանդարտ քայլերի տեղիք չտալ Գորիսյան բոլոր հարթակներում:

Սյունիքի մարզպետն անցած մոտ տասը ամսում հրաժարվել է համագործակցել համայնքի բնակչության կամքով ձեւավորված տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի ու ավագանու հետ:

Քանիցս պահանջել է, որ Գորիս համայնքի ընտրյալ ու բարեհամբավ ղեկավար Վաչագան Ադունցը հրաժարական տա՝ պատճառաբանելով, որ ինքն այդ պաշտոնի համար մարդ ունի, իսկ պարոն Ադունցը, հարգելով ընտրողների կամքը, իբրեւ գերակայություն ընդունելով ՀՀ օրենքներն ու Գորիսի պատիվն ու արժանապատվությունը, ընդառաջ չի գնացել մարզպետին:

Մարզպետն անթաքույց քայլեր է ձեռնարկել Գորիսի հանրությունը պառակտելու, մարդկանց միմյանց դեմ լարելու համար:

Իրավիճակն առավել անսովոր էր վերջին օրերին: Նա, որքան էլ տարօրինակ է ու զարմանալի, օգտվելով իշխանական իր լծակներից ու ֆինանսական հնարավորություններից, ամեն ինչ արեց ավագանու հունիսի 28-ի նիստը խափանելու համար: Ավագանու անդամները, ինչպես եւ սպասվում էր, լուրջ չվերաբերվեցին մարզպետարանից ստացվող թաքուն զանգերին եւ թախանձագին խնդրանքներին՝ բոյկոտելու ավագանու նիստը:

Ինչպես հետո պարզվեց, առաջին անգամ (պաշտոնավարման ընթացքում) հանգստյան օրերին մարզպետը մնացել էր Սյունիքում՝ այդ «աշխատանքը» համակարգելու համար:

էջ 7

«Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ. Ի՞նչ կապ ունի այդ ընկերությունը Վահե Հակոբյանի, Մհեր Պոլոսկովի հետ եւ ինչո՞վ է իրականում այն զբաղվում

Նախորդ հոդվածում անդրադարձել էի Սյունիքի ներկայիս մարզպետ Վահե Հակոբյանի եկամուտների հայտարարագրին, որն ավելի շատ հարցեր առաջացրեց, քան պատասխաններ տվեց: Մասնավորապես զարմանահրաշ էր միաժամանակ երեք պաշտոն զբաղեցնելու փաստը, այն էլ՝ ամսական միջինը 11 մլն դրամ աշխատավարձով: Հետաքրքիր է՝ այդ ո՞ր ընկերություններն են այդքան առատաձեռն եւ ինչի՞ համար են այդպես վճարում:

Ուսումնասիրության արդյունքում բախվեցինք մի ընկերության, որն ունի մոտ 1 միլիարդ դրամ աշխատավարձի ֆոնդ, բայց ինչի համար է ծախսվում այդ գումարը, անհասկանալի է: Տպավորություն է ստեղծվում, որ մարդիկ ահռելի աշխատավարձ են ստանում ուղղակի նրա համար, որ իրենք գոյություն ունեն: Ինչպես ժողովուրդը կասեր՝ «սիրուն աչքերի համար»:

Այժմ՝ ավելի հանգամանալից: ՀՀ կառավարության կայքից տեղեկանում ենք, որ Վահե Հակոբյանը մինչ մարզպետ դառնալը 2016թ. աշխատել է չորս գործատուի մոտ՝

1. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ (այսուհետ՝ ԶՊՄԿ)՝ որպես ադմինիստրատիվ տնօրեն, այնուհետեւ՝ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ,
2. «Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ՝ որպես կոմերցիոն տնօրեն,
3. «Իստ գեյթ ռեսուրսես» ՍՊ ընկերության տնօրեն,
4. ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի եւ տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ում մոնիթորինգի ծառայության մասնագետ:

Եթե ԶՊՄԿ-ն ներկայացնելու կարիք չկա, իսկ պետական ՊՈԱԿ-ում դժվար թե այդպիսի բարձր վարձատրություն լինի, ապա մյուս երկուսը բավականին հետաքրքրաշարժ են: Նրանք ստեղծվել են մոտավորապես նույն ժամանակահատվածում, երբ սկսվել է Վահե Հակոբյանի պաշտոնական հարստության կառուցումը: Հարկային տեղեկատվությունից պարզ է դառնում, որ «Իստ գեյթ ռեսուրսես» ՍՊԸ-ն հաջողություն չունեցավ:

Ստորեւ՝ քաղվածք մյուս ընկերության վերաբերյալ:

էջ 7

Տաթեւհէկ

Լուսանկարը՝ ԱՐԱՄ ԱՐԵՒՑՅԱՆԻ

«Քոնթուր Գլոբալ»-ը մեր փարածաշրջանում իրականացնում է միջազգային նորմերին (պահանջներին) հարիր սոցիալական եւ բնապահպանական քաղաքականություն

Ինչպես գիտենք, ՀՀ կառավարությունում 2015թ. հունիսի 8-ին ստորագրվել է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առքուվաճառքի փոփոխված եւ լրամշակված պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության, «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր», «Քոնթուր Գլոբալ Հիդրոկասկադ», «Քոնթուր Գլոբալ Տերրա Հոլդինգս» եւ «Սի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի» ընկերությունների միջեւ, իսկ նույն թվականի հուլիսի 30-ին գործարքը վավերացվեց. մի խոսքով՝ 2015թ. օգոստոսից «Քոնթուր Գլոբալ» ընկերությունն անցել է իր պարտականությունների կատարմանը՝ հետեւելով ՄԱԿ-ի Գլոբալ Կոմպակտ-ի գործունեության (Ընկերության կողմից ստորագրվել է 2010թ.) եւ Կայուն Զարգացման հիմնական սկզբունքներին ու փարեցփարի ընդլայնելով իր բնապահպանական եւ սոցիալական ծրագրերի շրջանակը:

Շամբի ջրամբար

Լուսանկարը՝ ԱՐԱՄ ԱՐԵՒՑՅԱՆԻ

«Սյունյաց երկիր» թերթին տված հարցազրույցում «Քոնթուր Գլոբալ Հիդրոկասկադ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Արա Հովսեփյանը նշել էր, որ այս ընկերությունն աշխարհի բոլոր երկրներում հանդես է գալիս «լավ քաղաքացու» իմիջով եւ հետամուտ է լինում իրականացնել այդ տարածաշրջանին պատշաճող բնապահպանական եւ սոցիալական զարգացման ծրագրեր: Տեւական ժամանակ անց կատարված աշխատանքներն ակնհայտ ու ոգեւորիչ են: *«Մինչ այժմ համակարգում էական փոփոխություններ են կատարվել, բայց ընկերությունն առաջնահերթությունը տալիս է աշխատանքի պաշտպանությանն ու անվտանգությանը, բնապահպանությանը: Այդ նպատակով կատարվել են եւ դեռ կկատարվեն մեծ ներդրումներ թե՛ համակարգի*

Արա Հովսեփյան

արդիականացման ու վերազինման, թե՛ սոցիալական, բնապահպանական, մշակութային եւ մի շարք այլ ուղղություններով: Կարճ ասած՝ արեւմտյան չափանիշներին հասնելու համար դեռ ճանապարհ ունենք անցնելու, – նշեց ընկերության արտադրության ղեկավար Արամ Յոլյանը եւ հավելեց, – *սարքավորումների արդիականացման ուղղությամբ 51 մլն դոլար ներդրում է կատարվել՝ դրանք նույնպես պետք է համապատասխանեն բնապահպանական չափանիշներին, այսինքն՝ հնարավորինս հրաժարվելով յուղով աշխատող սարքավորումներից՝ նվազագույնին ենք հասցնում շրջակա միջավայրին հասցվող վնասները: Մեր բոլոր կառույցներում նախատեսվում է կառուցել նաեւ մաքրման կայաններ, որոնք ՀՀ հէկ-երի ոչ մի համակարգում մինչ այժմ չեն եղել»:*

Սոցիալական ծրագրեր/ներդրումներ

2016թ. ընթացքում «Քոնթուր Գլոբալ Հիդրոկասկադ» ՓԲ ընկերությունը 100 հազար դոլար արժողությամբ սոցիալական ծրագրեր է իրականացրել մարզի տարբեր համայնքներում: *«Պատկերավոր ասած՝ մեր ընկերությունը տարածաշրջանում օազիսի նման երեւույթ է, որ սոցիալական եւ բնապահպանական ուղղվածության նշանակալի*



Արամ Յոլյան

ներդրումներ է կատարում, եւ հետագայում ավելի կընդլայնվեն այդ գործելաոճի սահմանները: Բայց որեւէ ծրագիր հաստատելուց առաջ համայնքների ներկայացրած դիմումները կամ առաջարկները քննարկում է սոցիալական ծրագրերի հանձնաժողովը եւ ընտրում նրանք, որոնք համապատասխանում են ընկերության քաղաքականությանը», – նշեց Արամ Յոլյանը: Ներդրումներ հիմնականում կատարում են իրենց կառույցների ազդեցության ներքո գտնվող համայնքներում, որոնց թիվն այս պահին հասնում է 15-ի: Ընկերությունն անցյալ տարի մշակել, այս տարի լրամշակել է շահառուների ներգրավվածության պլան, որտեղ ներկայացվում են, թե ովքեր են համարվում ընկերության շահառուները, որոնք են ազդակիր համայնքները եւ այլն: Սոցիալական, բնապահպանական ծրագրերի մեծ մասն իրականացվում են Գորիսի եւ Սիսիանի (քանի որ ՔԳՀԿ-ի կառույցները գտնվում է այդտեղ) տարածաշրջաններում, բայց ազդակիր համայնքների թիվը ժամանակի ընթացքում կարող է վերանայվել, այսինքն՝ ավելանալ կամ պակասել: *«Մոտ ապագայում կվերանայվի ընկերության ազդակիր համայնքների ցանկը եւ նոր ցանկը կներկայացվի հանրությանը»,* – նշեց արտադրության ղեկավարը:

Ա.Յոլյանի խոսքով՝ «Քոնթուր Գլոբալ»-ի քաղաքականությունը հետեւյալն է՝ չտալ նվիրատվություն: Որեւէ աշխատանք կատարելիս առձեռն գումար չի տրվում, աշխատանքներն իրականացվում են կապալառու կազմակերպությունների միջոցով՝ սահմանված կարգով: Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ այդ ընթացքում ժամանակավոր լրացուցիչ աշխատատեղեր են ստեղծվում:

Գորիսի պետական համալսարանում լաբորատորիայի հիմնում, Գեղագիտության ազգային կենտրոնի Գորիսի մասնաճյուղում ջեռուցման համակարգի անցկացում, Շաղատում՝ մանկապարտեզի տանիքի նորոգում, Անգեղակոթում՝ մշակույթի կենտրոնին կից զբոսայգու վերակառուցում, խմելու ջրի ցանցի նորոգման համար Որոտանում՝ 800 մետր, Տոլորսում՝ 135 մետր պոլիէթիլենային խողովակների տրամադրում ու երկու կապտաժի վերանորոգում (Տոլորս). սրանք են 2016թ. իրականացված առավել կարեւոր սոցիալական ծրագրերը: Վերոնշյալ համայնքների ղեկավարները կարեւորեցին ընկերության հետ համագործակցությունը՝ հույս հայտնելով, որ այն շարունակական կլինի:

Գորիսի պետական համալսարանի ճարտարագիտության եւ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ալբերտ Դինգչյանը մասնավորապես նշեց. *«Մեր ֆակուլտետի էլեկտրաէներգետիկա մասնագիտության համար էլեկտրաէներգետիկայի ժամանակակից լաբորատորիա է ստեղծվել համալսարան-գործատու կազմակերպություն համագործակցության շրջանակներում՝ բացառապես «Քոնթուր Գլոբալ» ընկերության ֆինանսական միջոցներով: Երկու սենյակ է վերանորոգվել, որտեղ տեղադրվել է լաբորատոր մեկ ստենդ եւ առաջիկայում նախատեսվում է համալրում: Առհասարակ ընկերության հետ համալսարանի համագործակցությունը բարձր մակարդակով է իրականացվում, երեւի թե ՀՀ-ում քիչ բուհերի հետ գործատուների նմանատիպ համագործակցության օրինակի կարելի է հանդիպել»:* Նա տեղեկացրեց նաեւ, որ նորաստեղծ լաբորատորիան տարբեր փորձեր կատարելու հնարավորություն է ընձեռում: Ընկերության լավագույն մասնագետները դասախոսում են բուհում, ուսանողներն

իրենց պրակտիկան, նաեւ որոշակի փորձեր անց են կացնում ընկերությունում, բացի դրանից՝ աջակցում են շրջանավարտներին աշխատանքի տեղավորման հարցում:

◈ ◈ ◈

Ի դեպ, կադրային քաղաքականությունից խոսելիս տեղեկացանք, որ բազմաթիվ երիտասարդներ ներկայումս ընկերությունում անցնում են համապատասխան դասընթացներ, շուտով կհանձնեն քննություններ, եւ առավել հաջող հանձնածներն աշխատանքի առաջարկ կստանան: *«Հիմնականում մեր աշխատակիցները տեղացիներ են, Երեւանից եւ արտերկրից քիչ թվով աշխատակիցներ ունենք: Հրավիրված մի քանի աշխատակիցներն իրենց գիտելիքներով, մշակույթով թարմ շունչ են տվել ընկերությանը, ասեմ՝ մեզ համար էլ հետաքրքիր է նրանց հետ աշխատելը: Հարկավոր է, որ մարդիկ իրենց մտածելակերպը փոխեն, ընդունեն նոր մշակույթը եւ աշխատառճը: Բարեբախտաբար երիտասարդներն արագ են ինտեգրվում սահմանված նոր պահանջներին»*, – նշեց Արամ Յոլյանը եւ հավելեց, որ այս տարի Գորիսի պետական համալսարանի լավագույն շրջանավարտներից մեկ-երկուսը դիտարկվում են՝ հետագայում աշխատանքի ընդունելու նպատակով: Մեր այցելության օրն առաջին պրակտիկանտին էին ընդունել, ով որոշակի փորձ ձեռք բերելուց հետո հետագայում կփոխարինի ոչ տեղացի կադրերին, նպատակը մեկն է՝ անհրաժեշտ է փոխառել արտասահմանի գործընկերների փորձը եւ կադրերի փոխարինման հստակ պլանավորում իրագործել: Սա է ընկերության կադրային քաղաքականության շարունակական գործընթացը:

◈ ◈ ◈

2017թ. նախատեսվում է Ծղուկ համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցում՝ էներգախնայող լուսադիոդային լուսատուներով, Գորիս քաղաքի Գր.Տաթեւացի փողոցում արդեն կառուցվել է խաղահրապարակ, Բռնակոթի եւ Դարբասի դպրոցներում (դեռեւս հաստատված չէ)՝ ինժեներական լաբորատորիայի ստեղծում: *«Կոնկրետ այս տարվա սոցիալական ներդրումային ծրագրերն ուղղված են մարզի կրթական,*

Արմեն Բոդոյան

սոցիալական եւ մշակութային ծրագրերի աջակցությանը, իսկ կապիտալ ներդրումային ծրագրերը հիմնականում ուղղված են բնապահպանական խնդիրների լուծմանը», - տեղեկացրեց «Քոնքուր Գլոբալ Հիդրոկասկադ» ՓԲ ընկերության շրջակա միջավայրի պաշտպանության եւ սոցիալական պատասխանատվության գծով ղեկավար Արմեն Բոդոյանը:

Բնապահպանական ծրագրեր/ներդրումներ

Արմեն Բոդոյանից տեղեկացանք նաեւ, թե որոնք են հէկ-երի շահագործման եւ վերազինման ծրագրի ժամանակ առաջացող հնարավոր բնապահպանական ռիսկերը: Դրանք հիմնականում կապված են նախեւառաջ արտադրության ընթացքում կամ վերազինման, վերանորոգման աշխատանքների ժամանակ թափոնների գոյացման եւ արդեն որոշ հնացած սարքավորումների եւ թափոնների տեսքով դրանց դուրսգրման, իսկ հաջորդը՝ յուղային տնտեսության, այսինքն՝ օգտագործված յուղերի հետ: *«Այս պահին ունենք ՀՀ բնապահպանության նախարարության հաստատած 11 թափոնի անձնագրերը, որոնցից ամենավտանգավորը՝ որպես այդպիսին, օգտագործված արտադրական մարտկոցներն են, որոնք դեռեւս դուրս չեն եկել արտադրությունից: Վերազինման ծրագրի շրջանակներում հնարավոր թափոնների գոյացման ցանկում ընդգրկված են նաեւ օգտագործված մալուխների որոշակի քանակություն, մետաղի ջարդոն (հին սարքավորումների մասերի տեսքով), օգտագործված լամպեր եւ այլն, որոնք պետք է փոխարինվեն նորերով վերոնշյալ ծրագրի շրջանակներում: Բնապահպանության նախարարությունը վերոնշյալ թափոնները դասում է 1-4 դասի վտանգավորության թափոնների շարքին, որոնք սխալ պահպանման եւ պահեստավորման դեպքում կարող են բնապահպանական խնդիրներ առաջացնել, սակայն ՔԳՀԿ ընկերությունը, առաջնորդվելով միջազգային նորմերով եւ պահանջներով, նախապես պլանավորել է դրանց պահեստավորումն ու պահպանումը: Համապատասխան պահեստների կառուցման նախագիծն ընթացքի մեջ է եւ առաջիկա մեկ-երկու ամսում պատրաստ կլինի»*, – տեղեկացրեց Արմեն Բոդոյանը:

Վերջերս անգլիական մի կազմակերպության միջոցով ընկերությունում իրականացրել են ասբեստ պարունակող նյութերի ուսումնասիրություն, գրանցվել են բոլոր այն սարքավորումներն ու միջոցները, որոնք պարունակում են ասբեստ, որն առողջության համար վտանգավոր է: Կա երկու տեսակ ասբեստ՝ փխրուն եւ ոչ փխրուն: *«Բարեբախտաբար, մեր հէկ-երում չկան փխրուն ասբեստ պարունակող նյութեր, սարքավորումներ, իսկ ոչ փխրուն ասբեստ պարունակողները նույնականացրել ենք, տեղադրել նախազգուշացնող նշաններ: Ասբեստ պարունակող չշահագործվող սարքավորումները տեղադրվել են Շամբ հէկում այդ նպատակով կառուցված պահեստում եւ անհրաժեշտ բոլոր միջազգային սահմանված ընթացակարգերով անցնելով՝ ժամանակի ընթացքում կհեռացվեն եւ կհանձնվեն համապատասխան լիցենզիա ունեցող ընկերությանը: Սա, ի դեպ ՀՀ-ում նորություն է»*, – նշեց Արմեն Բոդոյանը:

Գերմանական ինժեներական ընկերություններից մեկն ուսումնասիրել է ընկերության կառույցները եւ տվել անվտանգության եւ բնապահպանական առումով իր եզրակացությունները, որից ստեղծել է մի մեծ ցանկ: Ըստ առաջնահերթության սկսվել են աշխատանքներ իրականացվել, որոնք տարիների եւ մեծ ներդրումների հետ են կապված: Դրանցից են մաքրման կայանների, ջրամբարներում ձկնապաշտպան կառույցների, բիոսանհանգույցների տեղադրումը եւ այլն, բայց, զրուցակիցներիս խոսքով, ամենակարեւորն առանց պատահարների ու մարդկային կորստի աշխատանքն է եւ տարբեր բնույթի թափոնների ճիշտ կառավարումը:

Բիոսանհանգույցներն արդեն տեղադրվել են, իսկ ձկնապաշտպան կառույցների տեղադրումը բավականին աշխատատար գործընթաց է: Ա.Բոդոյանի տեղեկացմամբ՝ նախագծային աշխատանքներ իրականացնող կապալառու ընկերությունը որպես ենթակապալառու վարձել է ԳԱԱ հիդրոէկոլոգիայի եւ ձկնաբանության ինստիտուտի աշխատակիցներին, ովքեր արդեն ավարտել են դաշտային աշխատանքները եւ կենսաբազմազանության, ձկնատեսակների հետ կապված եզրակացություններ տալուց հետո կսկսվեն բոլոր ջրամբարներում (Անգեղակոթ, Սպանդարյան, Շամբ, Տոլորս) ձկնապաշտպան կառույցների տեղադրման նախագծային աշխատանքները: Նախատեսում են նախագծային աշխատանքներն ավարտել այս տարվա հոկտեմբեր ամսին:

◈ ◈ ◈

Ինչպես տեղեկացանք, ընկերության յուրաքանչյուր ծրագիր՝ լինի սոցիալական, բնապահպանական կամ մշակութային, ավարտելուց հետո մշտադիտարկվում է, այսինքն՝ վերադասին պարբերաբար ներկայացվում են հաշվետվություններ՝ քանակական եւ/կամ որակական համապատասխան ցուցանիշներով տվյալ ծրագրի արդյունավետության վերաբերյալ: Օրինակ՝ քանի՞ աշակերտ կամ ուսանող է օգտվել ստեղծված լաբորատորիայից, ինչպիսի՞ն է տրամադրված սարքավորումների տեխնիկական, վերանորոգված ջրամատակարարման ցանցի ընդհանուր վիճակը եւ այլն: *«Ընկերությունը հետեւողական է իր կատարած յուրաքանչյուր ներդրման, հետամուտ՝ ծրագրերի իրագործումից հետո դրանց նպատակային օգտագործման հարցում»*, – նշեցին զրուցակիցներս:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լուսանկարը՝ ԱՐԱՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ

Սպանդարյան հէկ

Լուսանկարը՝ ԱՐԱՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ

Սպանդարյան հէկ-ի մեքենայական սրահ

Լուսանկարը՝ ԱՐԱՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ

ՔԳՀԿ օրվա կարգավորման ջրամբար

Լուսանկարը՝ ԱՐԱՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ

Շամբ գյուղի մանկապարտեզ



Լուսանկարը՝ ԱՐԱՄ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ

Գորիսի պետական համալսարանի լաբորատորիա

º ê ÆÜÒ î º ê ºÈ º Ø

Ես ինձ տեսել եմ ակնափոյլ եղած՝
Հազար աչքաչափ ակնափոռոչի
մթին անձավում,
Որը եղել է պապերիս օրրան
Ու դարավորմիկ փաքուկ
իսանձարուր:
Ես ինձ տեսել եմ
Ակնափոռոչից վեր ակոս արած,
Դարերի փոշին կնճիռների մեջ,
քունքերին ցրած,
Շանթերի ծրած մի փոքրիկ
ձեղքում՝
Սաղարթներ փռած նշենու վրա,
նրա ընձյուղում:
Վայրի նշենու, որի բնընթաց
շարժումը ավշի
Զգացել եմ ես իմ ամեն ջիղում:
Ես ինձ տեսել եմ եւ կորաքամակ
թառերի վրա,
Իմ տպտերի պես մեջքերից ծռված,
Նռան գույնից կեզ՝ շուրթերը
որդան ու անկեզ կրակ,
Աչքերում բեկ-բեկ, ցոլցլուն ճրագ:
Ես ինձ տեսել եմ
Դին մապտուռների փլատակ
դարձած որմնաքարերում,
Ու կիսակործան որմերը կապող
կրակարերում,
Եվ կուց-կուց եկող զորնդեղ ջրին՝
Բուաչափ շինված գուռերի միջից
Դորակով ծլող ջրապարերում:
Ես ինձ տեսել եմ
Մութ մապտուռների ծիսաթակ
սեւում,
Ճերմակ թիթեռի նման թրթռող
Ծոր ծորուն լույսի սեւլիկ
ստվերում,
Ու զգացել եմ մոմը լուսնկաթ
Իր ժպտացոլքով ինչպես է հեւում՝
Կայծոռիկի պես թույլ լուսարձակով
Գիշերվա մութը ծվատում, ձեւում...
Ես ինձ տեսել եմ...

1973թ.

¸ º ð ² ê ² Ü º Ø

Ես դերասան եմ մտքերիս անշուք
փխուր սրահում,
Ու խաղում եմ լոկ ցնորվածի դեր
բեմահարթակին,
Իսկ թաղանթները իմ ականջների
թմբուկ են զարկում
Ունկնդիրների բուռն ծափերից...
Ու ծնծղաներ են զրնգուն զանգում,
Դուրս գալիս մտքիս խռով
ափերից,
Պղինձ զանգերի դողանջի
հանգույն
Թեւածում պապիս խռով
դափերին,
Ուր դեռ մեծ դպրիս աղոթքների
նուրբ մրմունջն է լսվում...
Ու ջժգոհում եմ ինքս ինձանից,
ինքս իմ դերից,
Որ կեղծարարի դեր եմ ստանձնել,
Ու ափսոսում եմ չարածիս համար,
Որ միայն խղճուկ ձայնապնական եմ
Ու ձայնափողը՝ ձայների կեղծած,
Որ ինքս ես չեմ, այլ մի ձայներիզ՝
Իմ իսկ էության նշանաձողը ու
գլխիս կեղծամ...
Բայց վերծանելին անեղծ է ու գոհ,
Որ ես եմ կրում իր իսկ դիմակը,
Իսկ լավի, բարու այծենակաճը
կրում է ինքը՝
Ինքս դարձել եմ նրա հենակը...
Բայց դե ինչ արած՝ ես դերասան
եմ,
Ժամանակն անսանձ ու
ապերասան՝
Անգիջում, անգութ, զորավոր
այնքան՝
Որ դեռ կարող է իմ ու քո, նրա,
Ունկնդիրների աչքերը փակել,
Ունկերը գոցել, պատռել դիմակս
Ու հոխորտալով անհոգ հեռանալ...
Դուք կծիծաղեք ճաղատիս վրա,
Որը ձգվում է մինչեւ ծոծրակս,
Իսկ իմ մանչուկը դեռ չիմանալով
ճակատ է կոչում՝
Ինքն էլ մեծ ճակատ, ինքն էլ բաց
ճակատ,
Բայց դեհ, ի՞նչ արած՝ ես դերասան
եմ,
Ժամանակն անպատիժ ու
ապերասան:

1973թ.

È à ô ê ² ´ ² ò

Բազկատարած ժայռածերպի
Երկինքն ավլող ծառին թառած
Քնաթաթախ բուն կոնչաց...
Ծառը դժգոհ ծույլ ծլնգաց,
Արմատները երակ-երակ կծիկ
տվեց,
Իսկ հիմնախախտ ժայռը դողաց
Ու սոսկումով իրեն ցնցեց...
Ժայռապորտից մի քար թռավ,
Վրնջացող նժույգի պես,
Գիշերվա մութը սղոցեց...
Կրակ փոշին երկինք առավ,
Անտեր մի շուն խուլ կլանչեց...
Բուկը մաքրեց սրնգահար
աքաղաղը,
Օդը ճեղքեց եւ զիլ ձայնով այնպես
կանչեց,
Որ վեր ելան մարդիկ քնատ,
Չէ՞ որ փիրուզ երկինքն արդեն
Լեղակ-լեղակ աչքն էր թարթել
Լուսաբաց էր...

1974թ.

ì º ðÐà ôÞ

Նորից խրվել եմ հոգոցներիս մեջ,
Կարիքն եմ զգում անթացուպերի,
Կամ ճոճք բազկաթոռ, որ հենվեմ
նրան
Ու բռնեմ դուրը խռիվ մտքերի:
Ընտրել ժայռածոր մի ծղոտ
կածան,
Ու մեր հնօրյա մապտուռներն ելնեմ,
Եվ նրանց ավեր ու կիսակործան
Փլված որմերից կարոտս առնեմ...
Ու մնամ շվար, եւ դառնամ
վարան...
Պապերիս պղինձ փարչերին գերի,
Մտքիս աչքերով տեսնեմ նրբիրան
Սյունյաց հարսերին
մատռվակելիս:
Ու դառնամ գինով, արբե՛մ ու
արբե՛մ...
Ու քարայծերի պճեղով բացած
Պարան կածանը ոտքով հավաքեմ,
Եվ ներանձնանամ թափուր
մնացած
Աղոթարանում՝ խունավ, սեւ-սքեմ,
Օճորքից ծլող կաթոցների պես
Ինքս փղձկամ ու արցունքոտվեմ,
Ու մոմեր վառեմ խորանի վրա,
Մեղապարտի պես խոնարհ ծունկ
չոքեմ,
Աղոթք մրմնջամ, թողություն
խնդրեմ...
Դուրս գամ գավիթից ծնկներում
խրված
Իմ դարձի ճամփան ծնկներիս
վրա,
Վեր ելնեմ տեղից ու լալահառաչ,
Սրբերի փոշին փեշերիս առած,
Կոթնեմ ժայռերիս ուսերին թառած
Քարարծիվների բրոնզ թեւերին,
Նրանց արծվենի հայացքի ճախրով
Հասնեմ իմ նախնյաց
շիրմաքարերին,
Ու փարվեմ նրանց՝ ողբամ
մեղմաձայն,
Իսկ հաչքարերս ողբիս ձայնակցեն
Ու ճախր առնեն՝ հնչեն եռաձայն,
Պատարագի պես հանգիստ
թեւածեն,
Անցնեն կիրճերով իմ անդնդախոր,
Քերծերիս պղինձ փեշերով ելնեն,
Ու ողջակիզեն հույզի կրակով,
Սեգ կատարներիս լանջին շունչ
առնեն,
Հեղոր դաշներգեն ու հոգեպարար,
Մեղմասահ իջնեն փիրուզ
դաշտերիս,
Փարատեն նրա հոգոցը ծարավ
Ու հանգրվանեն լեռան փեշերին,
Իսկ ես գետնամած շիրմաքարի
պես
Սրբերիս հառաչն տխուր ունկերիս
Մրմունջների մեջ նրանց հոգեքամ
Հաղորդությունը առնեմ սրբերիս:

1974թ.



Մեր բանասպեղծ Ապեկը

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հիսուն տարուց ավելի է, ինչ Ապեկնակ Գրիգորյանին գորիսեցիները Բանասպեղծ Ապեկը անվամբ են կնքել: Բանասպեղծ բառը Գորիսում չափածո խոսք ասելու մոլուցքով տառապող այլ մարդկանց անունների էլ են երբեմն կցում: Եվ դա տեղի է ունենում հատկապես այն ժամանակ, երբ ինչ-որ մեկն իր պատմությունն անելիս, ցանկանում է զրուցակցին ճանաչեցնել, թե խոսքը մեր քաղաքում նույն անունն ունեցող մարդկանցից որ մեկի մասին է: Բայց նման դեպքերում գորիսեցիները բանասպեղծ բառը տվյալ անձնավորության անվան կողքին հնչեցնում են հիմնականում հետեւյալ ձեւակերպմամբ՝ էն սուտ բանասպեղծը:

Տասնամյակներ ի վեր Գորիսի բնակիչների պատկերացումներում Ապետնակ Գրիգորյանն է եղել իսկական բանաստեղծի կերպար մարմնավորող էտալոն-անհատը:

Գորիսում չի գտնվի մի մարդ, ով նրա մի տողանի, մեջտեղից ծալած տետրը տեսած չլինի: Ողջ կյանքում նույնիսկ իր այդ սովորությանը նա մնաց հավատարիմ. միշտ մի տողանի, բարակ տետրերի էջերի վրա գրառեց չափածո խոսք դարձրած իր նվիրական ապրումները:

Գորիս քաղաքի կենտրոնական մասի մայթերին դժվար թե գտնվի մի հատված, որտեղ երբեւէ Ապետնակ Գրիգորյանը հանրահայտ իր տետրը ձեռքին՝ կանգնած չլինի եւ, ստեղծագործական արարումով արբեցած ինքնամոռաց տարերքի մեջ, իր սրտին մոտ մարդկանց համար բանաստեղծություններն ընթերցած չլինի: Համոզված եմ, որ այդպիսի դրվագներից գոնե մեկը Գորիսում ապրողների ենթագիտակցական խորքերում, անկասկած, դրոշմվել է:

Նա միայն կյանքի ութերորդ տասնամյակը թեւակոխելուց հետո, ձեռագրերն ի մի բերելով, սկսեց լրջորեն մտածել գիրք տպագրելու մասին եւ 2013 թվականին վերջապես հրատարակեց «Անթեղած կրակներ» վերնագիրը կրող իր բանաստեղծությունների ժողովածուն:

Համարյա նույն ծավալի գիրք կարող էր հրատարակել

¾ºÈ âÂà ì º ø...

Երկնում ճեմող բաղձանք՝ ցնդած երազ...
Հույզե՛ր, հույսեր անթով՝ ցավ ու պատրանք,
Դարձաք իմ ուսերին ձյութած վեղար,
Արբշիռ անուրջներիս պաճուճ-պատրանք:

Դժգոհ եմ ես ձեզնից ու վշտացած,
Որ աչքերս սեւով սնգուրեցիք,
Ճշմարիտս դարձավ՝ կեղծիքու ցավ,
Ձեր սին ստի համար խունկ վառեցիք:

Ու թողեցի՛ք միայն, ու թողեցի՛ք...
Եռոտանուն նստած քրմուհու պես,
Այնքան, որ ինձ թողիք միայն խեցիս՝
Ավեր դարձան ցոլուն հույսերս կեզ...

Դիմա դժգոհ, լքված՝ խեցիսու ես,
Մեր հնօրյա ավեր մի մատռուռում,
Կատարում ենք վշտի հույզերի ծես,
Սեւ օրերի համար մոմեր վառում:

Էլ չթողեք դուք ինձ, էլ չթողեք,
Մեր հավատը սրբոց, թող սուրբ մնա,
Խռով բախտս, հոգիս մի վրդովեք,
Թող ձեզ լինի բերած ձեր մանանան,
Էլ չթողեք դուք ինձ, էլ չթողեք...

22.01.1976թ.

êÆð º ð ¶

Յանկանում եմ շոգել ու ջերմանալ,
Շեկ վարսերիդ շոյքից մեղրաբաթել,
Ո՛ւ վարսերիդ հրով քիչ տաքանալ,
Ո՛ւ հմայքիդ թույրով կրկին արբել:

Եվ երազկոտ ու հեզ բնորդի պես,
Գտնել ինձ քո ծալի աչիկներում,
Ու վախվորած դողով մնալ անտես,
Իսկ դու ծածկես քո լույս թարթիչներով:
Բայց թե նվիրումի բաղձանքս կեզ
Աչքահուլունք են լոկ իմ հույսերին,
Ինքդ չես գալիս քո սիրուն տես,
Ձեփյուռների թեւով ու սյուքերի:

Սպասումի անձուկ մորմոքներից
Էություն ես դարձել հոգուս խորքում,
Արի կարոտներս դար շուրթերիդ,
Նինջ բեր իմ աչքերին ու հոգուս քուն:

1976թ.

Ð² è ² â ² Ü ø

Վշտերս՝ անամոթ, կակիծս՝ դառնահեծ...
Կարոտս՝ տարաբախտ՝ համասփյուռ տարագիր,
Մորմոքս սոսկահար՝ ցավագար շնչահեղձ,
Հոգոցս՝ խողխողված ապրումի պարագիծ...

Տենչերս՝ աշխարհի արնածոր մի հովիտ,
Հոշոտված, խարխլված, կրակված ու ավեր,
Ծնունդս՝ գոյաձեւ, պանդխտված հայրենիս,
Անհատնում երազանք հավերժի գոյատեւ:

Հույզերս՝ կերոններ՝ արարման ցայգալույս՝
Սրածված գոհերի տվնջյան լուսաղերս,
Հույսերս՝ հոգնաբեկ, ծագեծագ համասփյուռ
Հայորդոց դարձը Հայք՝ ոստանը սրբեզերք:

Բաղձանքս՝ անդորրի երջանիկ պաղատանք,
Իղձերս՝ մաքառման հրաշքի արարում,
Դրաշքս՝ ճախր առած երկնառաք հավատամք,
Մաղթանքս՝ հեգ ազգիս լաջվարդե խանձարուր:

1986թ.

È à ð º ð ê Â è ² Ü ...

Լեռան փեշերից լորերս թռան,
Զորերս նորից մնացին թափուր,
Ասես բներից հեքերս ելան,
Հուշերս թողած բներում փափուկ:

Եւ խորհրդային տարիներին: Բայց խորհրդային իդեալականացված համակարգում նա գիրք տպագրելու փորձ չարեց: Իսկ եթե նույնիսկ աներ՝ մեկ է՝ հրատարակչությունների գործունեությունը վերահսկող, այդ ժամանակաշրջանի գրական իրողություններն «արժեւորելու» իրավասությունն իրենց վրա վերցրած, պետության կերակրամաններին մոտ կանգնած գրաքննիչ այրերը հաստատ կձախողեին Ապետնակ Գրիգորյանի՝ գիրք տպագրելու նախաձեռնությունը, քանի որ այդ տարիներին բանաստեղծությունների վերածված նրա ինքնաճանաչողական խոստովանություններն ու քնարական մենախոսություններն անգամ ներծծված էին խորհրդային սղալված իրականությունը մերժող անհատի քաղաքացիական անհնազանդությամբ:

Անարդարության հետ չհամակերպվելու, ճշմարտությունը բարձրաձայնելու, անարժեքությունն արհամարհելու առնական մարդկային որակներն ամբողջ կյանքում նրա ուղեկիցները եղան:

Եթե մարդն իր ժամանակի ազնիվ, ես կասեի՝ աստվածահաճո քաղաքացին չէ, ապա այդպիսի մարդուն ոչ միայն բանաստեղծություն, այլեւ նույնիսկ ոտանավորներ գրելու իրավունքից էլ պետք է զրկել:

Համամարդկային արժեքներին հավատարիմ քաղաքացիականությունը մշտապես եղել է Ապետնակ Գրիգորյանի առօրեական կյանքն իմաստավորող, նրա կեցությանն ուղղորդող անկողոպտելի բաղադրիչը: Նա իր ստեղծագործություններում հաճախակի անդրադարձավ հանրային կյանքն այլասերող, մեր ազգային գոյությանն ու դիմագծին սպառնացող հոռի իրողություններին:

Անցյալ դարի 90-ականների դժնդակ տարիներին գոյատեւող մեր ժողովրդի հուզաշխարհի ներքին պոռթկումներին ունկնդիր՝ Ապետնակ Գրիգորյանը քամահրանքով ու սարկազմով լի պատկերավոր բանաստեղծական խոսքի հեղեղումներով ստեղծեց քաղաքացիական պոեզիայի ուշագրավ նմուշներ՝ իր խառնվածքին բնորոշ կատաղի խռովքով փնովելով հասարակության մեջ նյութականով միայն իրենց արժեւորել փորձող, հոգեւորից զուրկ, ինքնաբավ մարդկանց սնամեջ գոյությունը («Կարմիր մերսեդես», «Պատեհապաշտներին»):

Հատկանշականն այն է, որ խորհրդային իրավակարգից շուկայական հարաբերությունների անցման փուլում Ապետնակ Գրիգորյանի ներաշխարհը փոթորկած հենց այդպիսի՝ իրենց պետական այրեր հռչակած մարդկանց անբարո վարքագիծն ու ընչաքաղցությունն ի վերջո ձեւավորեցին լղոզված արժեհամակարգերով այն տխուր իրականությունը, որի մեջ հայտնվեցինք ազգովի...

Ի ծնե ամեն մի ճշմարիտ բանաստեղծի խառնվածք այս կամ այն չափով պարուրված է լինում դոնկիխոտությամբ. ասել է թե՝ իսկական բանաստեղծները մարդկային արժանապատվությունը, վեհանձնությունը, արդարամտությունը, ցնորական երազայինն ու վսեմն իրենց ներաշխարհում խիզախորեն կրելու եւ այդ արժեքներով մոլեռանդորեն ամբողջ կյանքում ապրելու ասպետական տոկունությամբ են օժտված լինում:

Թե՛ իր գոյությանն ուղեկից դարձրած վերոհիշյալ առաքինություններով, թե՛ իր անուրջներով սնվելու կարողությամբ, թե՛ իր դավանած սկզբունքներից չշեղվելու համառությամբ եւ թե՛ իր արտաքին տեսքով Ապետնակ Գրիգորյանն այնքան է Սերվանտեսի կերտած խորհրդավոր կերպարին հիշեցնում, որ նրան, առանց վարանելու, կարելի է իրական կյանքում ապրող Դոն Կիխոտի մերօրյա կրկնօրինակ համարել:

Եթե հաշվի առնվի նրա ծննդյան թվականը (1935), ապա ըստ մեզանում ընդունված ավանդույթի՝ նրան անցյալ դարի 50-ականների սերնդի ներկայացուցիչ պիտի համարել: Բայց Ապետնակ Գրիգորյանը մեր քաղաքում կարողացավ քայլել թե՛ 60-ականները, թե՛ 70-ականները ներկայացնող սերունդների հետ նաեւ ու, սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ նա իր ներաշխարհը խարսխեց 70-ականները խորհրդանշող իմ սերնդակից ստեղծագործողների մտերմիկ միջավայրում: Եվ դա պայմանավորված էր երեւի թե այն իրողությամբ, որ նա իրեն մեր ընկերական միջավայրում ավելի ընկալված զգաց:

Բնավորությամբ լինելով մարդամոտ՝ նա, առանց խտրականության, հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ նստեց ու նրանց հետ խորհրդածեց, իրեն հատուկ զավեշտալի երանգավորումներով ճեպանկարված խոսքի համ ու հոտով նրանց հետ զրույցի բռնվեց, եթե պետք էր՝ լսեց, եթե պետք էր՝ վիճեց, իր որդեգրած արժեհամակարգի պաշտպանության համար հոգեւորը քամահրող, տհաս ու նեղմիտ մարդկանց հետ երբեմն անգամ, բառիս բուն իմաստով, ձեռնամարտի մեջ մտավ, բայց կարողացավ, այդ ամենի հետ մեկտեղ, ողջ կյանքում ոգեղեն ոլորտներում ճախրող իր էության հետ ներանձնացած ապրել:

Ապետնակ Գրիգորյանի ստեղծագործական աշխարհում կան խորապես ապրված քնարական գործեր («Ես ինձ տեսել եմ», «Վերհուշ», «Էլ չքովեք»,«Հառաչանք», «Հուշանվագ»...): Նա պոեզիա բերեց իր էության հոգեկանչերով ու հորդաբուխ հուզաշխարհով շաղախված, ասելիքին համահունչ պատկերավոր մտածողության ինքնատիպ մի համակարգ, որի հախուռն գեղարվեստական դրսեւորումները չես կարող որեւէ մեկի ստեղծագործական աշխարհի մեջ գտնել:

Առաջնորդվելով հիմնականում դասական պոեզիայի ավանդույթներով՝ անցյալի ոչ մի բանաստեղծի չնմանակելով, ոչ մեկից խոհ ու պատկեր չմուրալով, Ապետնակ Գրիգորյանն արարեց իր բանաստեղծական աշխարհը՝ ոչ մեկին չկրկնելով: Թե կրկնելու թուլությամբ ինքն էլ, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ վարակվեց, ապա կրկնեց ինքն իրեն միայն...

21.04-02.05.2017թ., ք. Երեւան

Ձորաբերանի մասրենին տխուր
Հայացքը շրջեց՝ հեծկլտաց ծածուկ,
Ինչպես ձերմակ հոգս՝ կանաչ սպասում
Վարսերը փետրեց ուռենին ցածում:

Տխրություն իջավ լանջերիս վրա,
Ամայությունը փարվեց դաշտերին,
Կապտածիր հեռվում մի ձի վրնջաց,
Վրնջյունը զիլ գնաց կիրճերին:

Ափսո՜ս, թեւահար լորերս թռան,
Ձորերս նորից մնացին թափուր,
Հուշերս դամոկ թեւերին առած՝
Հույզերս դարան թեւերի ծափում:

1988թ.

ä ² î ºÐ ² ä ² Þ î Ü º ðÆÜ

Ես չեմ կարող դանել ձեր այդ կեցվածքը բութ՝
Ձեր սին քարոզները կեղծ ու պատիր,
Ամեն քայլափոխը սոսկ խաբկանք է ու սուտ,
Մի նոր պատուհաս է, մի նոր պատիժ:
Ձեր աչքերից վանող սառնություն է փչում,
Իսկ բիբերը՝ սեւեռ հանց ապակի,
Ձեզ թվում է, թե դուք հեռուներն եք միտում,
Ձերն են վայելքները՝ հարգ ու պատիվ:
Այդ թվում է լոկ ձեզ, քանզի խեղճ եք ու մեղկ,
Ձեր ուղեղում ամուլ, միտքը սերուցք չունի,
Ամորձատված գանգը վաղուց դվել է ձեղք,
Եվ խորհուրդը չէ այն, որ դուք դուրս գաք հունից:
Քանդ ու քարափ եղած հուն էլ չունեք, ախր,
Չոր ու ցամաք առվին էլ ի՞նչ ակունք ու հուն,
Անկլաեկ թողած պղնձի պես փուխր,
Մտածումի մեջ իսկ չունեք խորհրդի հունդ:
Քայլ ողորկորներ եք եւ ծարավի, եւ կուշտ,
Սոսկ դանայան դակառ՝ բնավ որ չի լցվում,
Երկվորյակն եք նրա, նրա պես եք պարպվում,
Եվ նրա պես անհագ, եւ նրա պես փքուն:
Խոհը հունդի մեջ է, հունդն է դալիս ծնունդ,
Դուք էն գլխից գրկված, էն գլխից եք դուք խեւ,
Պարարտ հողն է միայն հունդին դալիս սնունդ,
Սերմնացանը գիտե եւ պարարտ հող, եւ ցել:
Բայց երբ ցանքիդ տեղը՝ լոկ որոմ է բուսնում,
Գայլուկներն են ձգում ծտի ճոճքն իրենց,
Ու կցվելով միմյանց սարդոստայն են հյուսում,
Դաշտը պիտի վառել ու մոխիրը ցրել:
Բայց մենք մեղք ենք գործել, որ տվել ենք ձեզ թեւ,
Դուք մեր գլխին փորձանք ու մեր վզին պարան,
Ձեր բերանը կուպր՝ սեւ օրերից էլ սեւ...
Մեր դեմքերին դաջված դարամուտի խարան:
Տասը անգամ փոխիք ձեր շագրենի կաշին,
Հորջորջները դժգույն, անմիտ ու խեղճ,
Ո՞ւմ ինչ գործն է հիմա, ո՞ւմ եք դալիս հաշիվ...
Ո՞վ է քաղցած, ո՞վ կուշտ եւ ո՞վ է մերկ...
Հոգ չէ, թե որ քաղցը սովյալներ է հյուծում,
Ինչ ցավով է տնքում խրճիթ ու խուղ,
Ուր կախվողի համար ձիգ պարան է ձյութվում,
Դուք ծիրանին ուսել՝ գլխներիդ խույր...
Փույթ չէ, որ բակերում՝ փողոցներում թափուր
Սպանվում է օրը շլինքը կախ,
Ո՞վ է ձեպով հիմա իր մախաղը կապում,
Ո՞ւմ երեսից ձերմակ նախճիրի խայծ...
Ցավը տերը քաշի, որ գեհենում այս գաղջ
Անդերունչ է աշխարհն ու ամայի,
Երբ ենք դեսել նման ունեզրկում ու խարջ,
Տե՛ր իմ, արի մեզ դես՝ քեզ խնայիր...

26/03/2000թ.

ÐàôÞ ² Ü ì ² ¶

Պղինձքերծի բարձունքին այնքան կրակ է վառվել,
Այնքան ծաղկունք է փռվել Պղինձքերծի բարձունքին,
Որ չես կարող դքնությամբ հույզի մորմոքդ ցրել
Ու ջնծալ բերկրությամբ միջով քո բիլ արցունքի:

Պղինձքերծի բարձունքին ժպիտներ են ծվարել,
Ծիծաղներ են ծրարվել՝ համբույրների նման կեզ,
Որ ուզում ես գիրկն ընկնես, համբույրներից նվաղես,
Այնքան բուրում կա նրանց արեւաբույր աչք, ունքին:
Պղինձքերծի բարձունքին բյուր աչք
ասպղեր են վառվել՝
Գրկախառնվել ծովածուփ՝ ելման
զմրուխտ կանաչին,
Ինքնամոռաց արբունքով հյուսել
երգեր սիրազեղ,
Որ ուզում ես հափրանաս ունկդ
նրանց հառաչին:

Պղինձքերծի բարձունքին խունկ ու
կնդրուկ են վառել,
Հույս ու հավատ սնարել
բուրումներում իրիկվան,
Քիչ է մնում խաշխաշի թուրմով
արբել, մարմրել,
Կյանքի անուրջ հույզերի
մորմոքներից կրակված:

Պղինձքերծի բարձունքին հուշը
ծաղկունք է դառել,
Ինչ հայացքներ են սառել
Պղինձքերծի բարձունքին,
Արդասվաթաց երկինքը մարմանդ
անձրեւ է մաղել,
Ժայռը դիտուր, վշտահեծ, սիրով
իջել է ծնկի:

Պղինձքերծի բարձունքից եկեք,
ծաղիկ չքաղենք,
Եկեք ծիծաղ չքաղենք, հիշատակը
երեկվա,
Մեր անցկորիկ հարության
բուրումները ծաղկավետ,
Պսակները ծաղկաբույր թող
խնկարկեն հավիտյան:

¶ àðÆê

Ի՜մ փոքրիկ, ի՜մ գողտրիկ
պերճուհի,
Ի՜մ մեղուշ, ի՜մ հրաշք օրրան,
Ինձ համար եւ նոր ես, եւ շատ հին,
Սրբերի պանթեոն ու խորան:

Գարնանը զմրուխտ ես հագնում
Ու ծիրում ծաղկանց ծիծաղով,
Ժանյակ է ուսերիդ ու մահմուր,
Թովում ես թույրերով ու դաղով:

Ի՜մ փոքրիկ, գողտրի՜կ իմ քաղաք,
Ծվարել լեռներիդ հովտում,
Ասես Եդեմից փոխ առած
Դրախտի բույրերն ես խնկում:

Ծնվել եմ հովանուդ ներքո,
Ապրել եմ երկնային դողով,
Մազլցել քարափ ու քերծով,
Ջերմացել արեւիդ շողով:

Ելել եմ ժայռերով քո սեգ
Ու փարվել երկնասույզ կատարիդ,
Երկյուղած, դողեղող վար իջել,
Ցնծացել հույզերիս պատարից:

Լողացել ջրերում քո լազուր
Ու կապտած ելել եմ ջրից,
Ջերմացել մանրահատ ավազում
Ու շիկնանքն առել արեւի:

Ու Լաստու փեշերով ելել վեր,
Վախվորված հասել եմ ես դուն,
Հերթական պատիժս կրել՝
Անամոթ ու նոթի մտել քուն:

Տեսել եմ եւ՛ չարը, եւ՛ բարին,
Զգացել կեղծիք ու խարդավանք,
Ճաշակել մրուրը այս դարի,
Ուր լկվեց եւ սեր, եւ հավատ:

Ի՜մ քաղաք, ի՜մ Այունյաց պերճուհի,
Լաստն է հովանի քո մեջքին,
Գնում ես քո բախտին ընդառաջ,
Հրճվում եմ օրերիդ երթից:

Ի՜մ ջնաղ, ի՜մ գողտրիկ քաղաք:

2008թ.

ÐàôÊ ² Ê ² ´ àôÂÚàôÜ

Մորմոքներիս սրահում
Ասես եւ կամ, եւ չկամ,
Տեսնես ո՞ւմ է հմայում
Իմ ոսկեվարս լուսնկան:
Կրակներս բոցկլտուն,
Լեզվակներով լուսո թել,
Առած կարոտ ու խնդում՝
Ցոլցլում են լուսաթեւ:
Մարմրում եմ ասես ես,
Կրակվում եմ, չքանում,
Երազներս լուսագեւ,
Մորմոքներիս քուրայում
Կրակներիս հուրն առած
Հոգոցներս են այրում:
Էլ ոչ մի հույս չմնաց,
Անհուսության դեղդից զարթ,
Անգամ սրբերս չելան,
Թողեցին ինձ ձերբազատ...
Դարեր եկան ու անցան,
Չերկնեցիր, չելար դու,
Իմ թեւավոր պայազատ,
Հոգու փրկիչ ու իմ քուրմ:
Հիմա դենչերս հեռվում
Լաջվարդ կապույտը գրկել,
Սպասում են, որ ելնես,
Հեքիաթներով լուսագեւ,
Քո հրայրքները բանաս,
Ծով վշտերս ամոթես:
Բայց չես գալիս, չկաս դու,
Ջուր եմ ինքս ինձ դանջում,
Կմարմրեմ ինչպես հուր,
Իմ մեղմասահ անուրջում,
Կմարմրեմ որպես հուր,
Իմ մեղմասահ անուրջում,
Կմարմրեմ որպես հուր,
Ինձնից ոչինչ չի մնա,
Քեզնից խռով ու դիտուր,
Աչքերս բաց կգնամ:

1986թ.

²ÚÈ² ¸ ² ì º ðÆÜ

Կուռքե՛ր ինքնակոչ, փառասեր,
Հագել արնավառ ծիրանի,
Գլխներիդ ականզարդ ֆեսեր,
Ձեռքներիդ խարազան դիրանի,
Բացել եք ցնծության ծեսեր
Ու բռնել կույր ճամփան Թուրանի:

Կուռքեր նորահայտ, բարձրագոչ՝
Շեղվելով սրբերի խորանից
Խուժանից ընտրել եք կայազոր՝
Կտրիճներ վտարել օրրանից,
Խրվել եք բազմոցում ինքնագոհ՝
Դասեր եք առնում «Ղուրանից»:

Ձեր դեմ էլ կարծես խաղ չկա,
Որ զառը դուշեշ է շահել,
Ձեր հարգին վերինն է վկա,
Ձեր խաթրին վառել է ջահեր,
Հոգ չէ, թե ողբ է ու կական,
Ամենուր արյուն է ու ավեր:

Ամեն ելուզակ՝ բարերար,
Բազմել պերճաշուք իր քյոշքում,
Գողոն է բաժանում ու ավար,
Ու թեղում շեղջերը ոսկու,
Լումայով գնում է հավար՝
Լեղի է բաժանում ու թույն:

Հոգնել եմ ձեր ճոճքից հնօրյա,
Կեղծիքին բարեմիտ՝ թքած,
Կոչերը թաթախ են արյամբ
Ու էժան ճառերով թիած,
Ո՞ր է ձեր ոգին նախիրյան,
Զոհերս են թիկունքից խփած:

Էլ մեր մոտ հավատ չմնաց,
Փակվել են դռները գութի,
Ինչ-որ կար՝ փեշերին առած
Անցել է լեռնանցքով խութի,
Ձեզ մնաց աշխարհը արար՝
Մեզ նրա սրվերը մութի:

Ընկել եք հետեւից շահի,
Ամեն ինչ իրացվում փողով,
Մեզ համար օրերը դաղտկալի՝
Անցնում ենք վախվորված դողով,
Փակել եք աչքերը դավի
Ու դարձել անխոց, անողորմ:

Երկիրը հանել ահուրդի,
Մեր հոգին լցվել է ահով,
Զրկել եք մեր հոգու պահուստից,
Կսկծում՝ դանում եք ցավով,
Հասել եք ծերը աբսուրդի,
Դուք անեղծ՝ իսկ մենք հանցավոր:

2008թ. Մարտ

ԼԵՎՈՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ. «...Մենք ունենք բոլոր հնարավոր միջոցները, որոնք թույլ են տալիս ոչ միայն զսպելու, այլեւ պատերազմի վերսկսման դեպքում հակառակորդին պարտադրելու մեր կամքը»

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար Լեւոն Մնացականյանը

էջ 1

– Պարո՛ն նախարար, նախեւառաջ կուզենայինք իմանալ Ձեր գնահատականն Արցախ-Ադրբեջան շփման գծի օպերատիվ իրավիճակի մասին: Վերջերս՝ գրեթե ամեն օր, լարվածության սաստկացման մասին լուրեր ենք լսում:

– Ընդհանուր առմամբ առաջնային գծում տիրող իրավիճակը կարելի է բնորոշել որպես կայուն լարված: Հակառակորդը, իր սովորության համաձայն, կիրառելով տարբեր տրամաչափի հրածգային եւ ականանետային զինատեսակներ, փորձում է արհեստականորեն սրել իրավիճակը: Հատուկենտ դեպքերում արձանագրվում են նաեւ դիվերսիոն ներթափանցման փորձեր, որոնք ժամանակին հավաստանշվում եւ կանխվում են: Չնայած հակառակորդի դրսեւորած ակտիվությանը, ՊԲ առաջապահ ստորաբաժանումները լրիվությամբ վերահսկում են իրադրությունը եւ անհրաժեշտության դեպքում իրականացնում կանխարգելիչ գործողություններ:

– Եթե կարելի է՝ համառոտ զուգահեռ անցկացնենք Արցախ-Ադրբեջան սահմանագծի (շփման գծի) հուսալիության, պաշտպանվածության՝ 2016թ. ապրիլյան օրերի եւ ներկա վիճակի միջեւ:

– Ասել, որ մինչ ապրիլյան առճակատումը մեր առաջնագծում կատարված աշխատանքներն անբավարար են եղել հուսալի պաշտպանություն իրականացնելու համար, մեղմ ասած, սխալ կլիներ: Այլ հարց է, որ ժամանակի հետ փոխվում են նաեւ պաշտպանական համակարգի առջեւ դրված խնդիրներն ու պահանջները, եւ այն անընդհատ կատարելագործման ու վերազինման կարիք է զգում: Ապրիլյան մարտերը, բացի մի շարք կարեւոր դասերից, մեզ առիթ տվեցին հետեւություններ կատարել նաեւ առաջնային գծի վերակահավորման ու ամրապնդման հետ կապված հարցերի շուրջ: Անցած գրեթե մեկ տարվա ընթացքում այդ ուղղությամբ իրականացված աշխատանքները, կարելի է վստահորեն ասել, հիմնովին փոխել են շփման գծի ողջ երկայնքով եւ խորությամբ ստեղծված մեր պաշտպանական համակարգի՝ մինչ այդ ունեցած հնարավորությունները: Այստեղ խոսքը վերաբերում է ինչպես ինժեներական բաղադրիչի կատարելագործմանը, այնպես էլ ժամանակակից տեխնիկական սարքավորումների ներդրմանը, ինչը հնարավորություն է տալիս մեզ անհրաժեշտ խորությամբ էշելոնացված դիտարկում իրականացնել առաջնագծում եւ, որ շատ կարեւոր է, հետեւել հակառակորդի շարժին ու գործողություններին:

– Ժամանակ առ ժամանակ հանրությունը տեղեկացվում է առ այն, որ վերջին մեկ տարում նկատելի առաջընթաց է գրանցվել մեր բանակի սպառազինության, սահմանի պաշտպանական համակարգի արդիականացման ուղղությամբ: Կարո՞ղ եք մեկ-երկու կոնկրետ օրինակ մատնանշել այդ առումով, եթե, իհարկե, ռազմական գաղտնիքը խախտելու խնդիր չկա:

– Ինչ վերաբերում է սահմանի պաշտպանական համակարգի արդիականացման ուղղությամբ իրականացված գործընթացներին, ես վերեւում նշեցի, ու, թերեւս, դրանով բավարարվենք: Սպառազինության մասով ասեմ հետեւյալը՝ մենք ունեն ժամանակակից, այդ թվում նաեւ հայրենական արտադրության բոլոր այն հնարավոր միջոցները, որոնք թույլ են տալիս ոչ միայն զսպելու, այլեւ պատերազմի վերսկսման դեպքում հակառակորդին պարտադրելու մեր կամքը:

– Պատկերացնում ենք պաշտպանության նախարարի ցավն ու ծանր ապրումներն ամեն մի զինվորականի մահվան դեպքում: Բայց շատ կարեւոր է ամեն մի միջադեպի հետաքննությունը... Վերջերս մի արտահայտություն լսեցինք, որ ողջամիտ թվաց ստեղծված իրավիճակում. «Փառք Աստծո, որ զոհված զինծառայողների ցավալի իրողությունը չի վերածվում վիճակագրության, այլ մեկ առ մեկ, դեպք առ դեպք քննարկվում է եւ որոշումներ ընդունվում»: Ձեր նկատառումները կուզենայինք լսել:

– Յուրաքանչյուր հայ զինվորի կորստյան ցավ մենք՝ զինվորականներս, ազնվորեն ու հավասար կիսում եւ սգում ենք նրա ծնողների ու հարազատների հետ. դա իրականում այդպես է: Հենց այս իրողությունից բխող տրամաբանությամբ էլ ընդունում ենք մեր որոշումները եւ կատարում համապատասխան հետեւություններ:

– Ցավալի այդ հարցում ուզում ենք մինչեւ վերջ անկեղծ լինել. երբ զինվորը սահմանի պաշտպանության ժամանակ է զոհվում կամ մարտական գործողության ընթացքում, դա հանրային այլ ընկալումի է արժանանում, նման զինվորներին արդարացիորեն նահատակ ենք համարում: Եվ դա ճիշտ է: Բայց երբ զինվորը մահանում է ներքին կարգապահական կանոնների կամ ներքին հարաբերությունների ոչ ճիշտ իրացման արդյունքում, ապա դա շատ ավելի ցավալի է լինում հանրության համար:

– Բանակի համար երկու դեպքում էլ կորուստը ծանր է, ինչպես ծնողի եւ հարազատի համար է լինում ծանր: Նրանք զավակ են կորցրել, իսկ մենք՝ զինվոր:

– Երբ կողքից դիտարկում ենք շփման գծում տեղի ունեցող միջադեպերը, ժամանակ առ ժամանակ արձանագրվող դիվերսիոն քայլերը հակառակորդի կողմից, իրավիճակը սրելուն միտված գործողությունները, տպավորություն ենք ստանում, որ մեր մարտավարությունը բացառապես զսպման մարտավարություն է, ինչն, իհարկե, գնահատելի է եւ համապատասխանում է հայկական երկու հանրապետության ռազմաքաղաքական դոկտրինային: Բայց հակառակորդը, կարծեք, դա չի գնահատում, դրանից եզրակացություններ չի անում...

Միգուցե ժամանա՞կն է, որ մենք զսպման քաղաքականությունից անցնենք ակտիվ զսպման, ակտիվ կանխարգելման քաղաքականության:

– Չեմ կարծում, որ դա հրապարակային քննարկման թեմա է: ՊԲ հրամանատարությունը նման հարցերի շուրջ իր որոշումներն ընդունում է ըստ անհրաժեշտության եւ նպատակահարմարության: Արցախի զինված ուժերի գլխավոր խնդիրը հարազատ ժողովրդի եւ երկրի անվտանգ կենսագործունեության ապահովումն է եւ դա կատարում է պատվով: Լինել նախահարձակ, դեռեւս չի նշանակում հանդես գալ թելադրողի դերում:

– Միջազգային ինչ-ինչ կազմակերպություններ, փորձագետներ վերջերս ավելի հաճախ են նշում հայ-ադրբեջանական նոր զինված ընդհարման, բախման հավանականությունը մեծանալու մասին: Նույնիսկ ենթադրություններ են արվում, թե հնարավոր ընդհարումն ինչ սցենարով կզարգանա:

Դուք՝ որպես Արցախի Հանրապետության պաշտպանության նախարար, ինչպե՞ս եք գնահատում պատերազմը վերսկսելու հավանականությունը եւ հնարավոր ռազմական գործողությունների հետեւանքները:

– Ես՝ որպես պաշտպանության նախարար, պարտավոր եմ պատերազմի վերսկսման հավանականության մասին մտածել ամեն պահի եւ հենց այդ հաշվառումով էլ կազմակերպում եմ իմ եւ բանակի առօրյա կենսագործունեությունը: Ինչ վերաբերում է հնարավոր ռազմական գործողությունների հետեւանքներին, ապա, ի տարբերություն հակառակորդի, մենք նախընտրում ենք, բարձրագոչ հայտարարությունների փոխարեն, մեր իրական հնարավորությունները ցույց տալ մարտադաշտում:

– Մի դիտարկում էլ ունենք՝ ե՛ւ փորձագետները, ե՛ւ որոշ զինվորական գործիչներ (նախկին ու ներկա) հայ-ադրբեջանական հնարավոր ու նոր բախման մասին խոսելիս երկու հանգամանքի վրա ուշադրություն են սեւեռում՝ մեկն այն է, որ հակառակորդը սպառազինության հարցում ինչ-որ առավելություն ունի, մյուսն էլ այն է, որ մարդկային ռեսուրսն էլ գերազանցում է մեր ունեցածին: Իհարկե, հաճախ նաեւ այդ դատողություններին իրենք էլ պատասխան են տալիս՝ ո՛չ սպառազինությունը, ո՛չ մարդկային ռեսուրսի գերազանցությունը չեն կարող վճռորոշ լինել, բայց... Մեզ, անկեղծորեն, Ձեր կարծիքն է հետաքրքրում:

– Չնայած իմ նախասիրությունների մեջ գրեթե չի մտնում անցյալ ժամանակով խոսելու սովորությը, բայցեւայնպես բացառության կարգով ստիպված եմ հիշեցնել Արցախյան առաջին պատերազմի փորձը: Այն ժամանակ էլ թե՛ կենդանի ուժի, թե՛ սպառազինության թվաքանակով բազմիցս զիջում էինք հակառակորդին, բայց եղավ այն, ինչ որ եղավ: Այսօր ուժերի հարաբերակցությունը լրիվությամբ այլ է, եւ ոչ ի նպաստ հակառակորդի: Խոսքը վերաբերում է ինչպես սպառազինությանը, այնպես էլ այդ սպառազինությունն օգտագործող զինվորի մարտավարամասնագիտական պատրաստվածությանը: Այնպես որ մենք ունենք այն, ինչն անհրաժեշտ է մեր առջեւ դրված խնդիրը հաջողությամբ լուծելու համար:

– Ապրիլյան պատերազմի փորձն ու դասերը հաշվի առնելով՝ ինչպե՞ս եք գնահատում կամավորների, պահեստազորայինների դերը սահմանային լարված իրավիճակներում կամ մարտական գործողությունների ընթացքում:

– Ապրիլյան առճակատումը մեկ անգամ եւս ապացուցեց, որ մեր բանակը ժողովրդական բանակ է եւ ունի հայրենիքի պաշտպանության սուրբ առաքելությունը փայլուն կերպով կատարելու հզոր ներուժ: Իրականում անգնահատելի է բոլոր նրանց կատարածը, ովքեր, առանց կանչի, հաշված ժամերի ընթացքում կամավորագրվեցին հայրենիքի պաշտպանությանը: Նման պահվածքն ու պատրաստակամությունը կարեւոր էին ոչ միայն բանակի անհրաժեշտ համալրվածությունը ժամանակին եւ հավուր պատշաճի ապահովելու տեսանկյունից, այլեւ զինանձնակազմի բարոյամարտական ոգին բարձրացնելու առումով:

– Բավականին շատ խոսվեց օրերս անցկացված թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժության մասին: Ըստ Ձեզ՝ ռազմավարական, մարտավարական, սպառազինության տեսակետից ինչ-որ նորույթ կա՞ր այդ զորավարժություններում, թե՞ դա կարելի է համարել հերթական ու սովորական վարժանք, ուժերի հարաբերակցությանն էական անդրադարձ չունեցող մի միջոցառում:

– Զորավարժությունների անցկացումը յուրաքանչյուր բանակի մարտավարամասնագիտական պատրաստության բարձրացման կարեւոր բաղադրիչներից է, եւ դրանք իրականացվում են հենց այդ նպատակին ծառայեցնելու համար: Իհարկե, լինում են երկրներ, որոնք համաբանակային կարեւորության նման միջոցառումներն իրականացնում են առանց հրապարակային լայն հնչեղություն տալու դրանց, բայց լինում են նաեւ երկրներ, որոնք տվյալ զորավարժությունները կազմակերպում են հենց հնչեղություն հաղորդելու համար: Չթերագնահատելով մեր հակառակորդին, այդուհանդերձ տպավորություն է ստեղծվում, որ Ադրբեջանը դասվում է զորավարժություններին հնչեղություն տվող երկրների շարքին: Իհարկե, դա իրենց գործն է, իսկ մեր գործն է հանգիստ ու առանց ավելորդ հրապարակայնության զբաղվել մեր բանակի մարտունակության բարձրացմամբ եւ հարկ եղած դեպքում կատարել այն, ինչին կոչված է Արցախի զինված ուժերը:

– Ի դեպ, թուրքական հրահանգիչների, սպաների, մասնագետների մասին եւս ժամանակ առ ժամանակ լսում ենք, որոնք ընդգրկված են ադրբեջանական զինուժի կազմում: Նախ՝ որքանո՞վ են այդ խոսակցությունները հավաստի, եւ երկրորդ՝ արդյո՞ք թուրքական մասնագետների գործակցությամբ ադրբեջանական բանակի մարտունակությունն ինչ-որ չափով բարձրանում է:

– Նախ ասեմ, որ թուրքական հրահանգիչների եւ մասնագետների առկայությունն ադրբեջանական բանակում նորություն չէ, քանի որ նրանց ներկայությունն այդտեղ եղել է 1992 թվականից սկսած: Հայտնի փաստ է նաեւ, որ բացի հրահանգիչներից եւ մասնագետներից, ադրբեջանական բանակի կազմում Արցախյան առաջին պատերազմին իր մասնակցությունն է ունեցել թուրքական «Գորշ գայլեր» ստորաբաժանումը: Կան նաեւ հավաստի փաստեր ապրիլյան առճակատման ժամանակ թուրքական հատուկ ջոկատայինների մասնակցության վերաբերյալ: Այնպես որ թուրքական գործոնն ադրբեջանական բանակում միշտ էլ եղել է: Իսկ թե որքանով է դրա առկայությունը նպաստում հարեւան երկրի զինուժի մարտունակության բարձրացման վրա, չեմ ուզում գնահատել նախկինում Ադրբեջանի հետ ունեցած լայնածավալ կամ տեղային նշանակության առճակատումների արդյունքներով, քանի որ դրանք արդեն անցյալ են: Կապրենք, կտեսնենք:

Հարցազրույցը՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

ՄՈՒՐԱԴ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ. դատավո՞ր, թե՞ անգրագիտության անձեռակերտ հուշարձան

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մուրադ Հովակիմյանը 2015թ. մայիսի 5-ին հինգ հոգու զրկել է իրենց իսկ սեփականություն հանդիսացող բնակարանից, որի արդյունքում փողոցում են հայտնվել նաեւ 86-ամյա տատիկը, 4-ամյա մանկահասակ երեխան եւ հղի կինը:

Ի՞նչ խարդախությունների ու խաղերի միջոցով է կատարվել այդ ամենը:

Գորիս քաղաքի Գետափնյա 14/21 բնակարանն ունեցել է հինգ համասեփականատեր: Նրանցից մեկը՝ Գարիկ Բաբայանը, «Յունիբանկից» վերցել է 350 հազար դրամ վարկ: Եվ քանի որ վարկը վերցրել է անձնագրով ու երեւան քաղաքից, մյուս համասեփականատերերն այդ մասին չեն իմացել: Դրանից հետո Գարիկ Բաբայանը տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնություն՝ չվճարելով վարկի գումարի եւ բանկային տոկոսի մի մասը՝ աշխատանք չունենալու, ինչպես եւ առողջական խնդիրների պատճառով: Վճարված գումարը կազմել է մոտ 400 հազար դրամ, պարտքը՝ 500 հազար դրամ:

Բանկը դիմել է դատարան, իսկ դատավոր Մուրադը…

Ահա այսպիսի վճիռ է կայացրել դատավոր Մուրադը. *«…Գորիս քաղաքի Գետափնյա փողոցի 14 շենքի 21 հասցեում գտնվող բնակարանի՝ Գարիկ Բաբայանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 1/5-րդ բաժնեմասը… մեկամսյա ժամկետում երրորդ անձանց՝ համասեփականատերեր Էմմա Բաբայանի, Արմեն Բաբայանի, Արտուր Բաբայանի եւ Վալենտինա*

Այվազյանի կողմից 1.350.000 ՀՀ դրամ գումարով չգնելու դեպքում… բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառել, ստացված գումարը բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցների միջեւ նրանց բաժիններին համաչափ եւ բռնագանձումը տարածել պատասխանող Գարիկ Բաբայանի բաժնի վրա»:

Եվ վճիռն ի կատար է ածվել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

Մուրադի իրավական անգրագիտության վրա լույս սփռելուց առաջ հակիրճ ասենք, թե ինչ ճակատագիր ունեցավ հակաօրինական ու անբարո այդ վճիռը:

Նույն վճռի մեջ նշված է (հավանաբար՝ շուկայական գներից ելնելով) 55,3 քառակուսի մետր մակերեսով բնակարանի 1/5-րդ մասի արժեքը 1.350.000 դրամ է, ինչը նշանակում է, որ բնակարանի շուկայական արժեքը կազմել է 5Х1.350.000=6.750.000 դրամ:

ԴԱՀԿ սյունիքյան կառույցի շուստրի տղերքը, սակայն, բնակարանը վաճառել են 877.000 դրամով:

Ո՞ւմ են վաճառել, ո՞վ է բնակարանի գնորդը. ԴԱՀԿ-ում չեն ասում, գաղտնի են պահում:

Մինչդեռ բնակարանի համասեփականատերերը հայտարարում են՝ պատրաստ ենք միանգամից (միանվագ) վճարել բանկին պարտք մնացած գումարը, միայն թե վերադարձրեք մեր բնակարանը, բայց ԴԱՀԿ-ի տղերքը շարունակում են մնալ անդրդվելի՝ հիմք ընդունելով ոչ բարով Մուրադի վճիռը:

ԴԱՀԿ-ն, մինչդեռ, այլ դիրքորոշում է որդեգրել՝ 877.000 դրամով վաճառած բնակարանից յուրաքանչյուր սեփականատիրոջ առաջարկել 166.000 դրամ: Այսինքն՝ մարդուն սեփական բնակարանից հանել եւ շպրտել են՝ փոխարենն առաջարկելով 166.000 դրամ:

Բնակարանի համասեփակա-

էջ 8

Գորիսն ապստամբության դրոշ է պարզել

Համայնքի ավագանին Սյունիքի մարզպետին կանչել է բացատրության եւ հաշվետվության

էջ 1

Ավագանու նիստը, չնայած այդ ամենին, հունիսի 28-ին սկսվեց ճիշտ ժամանակին եւ վաղօրոք հայտարարված օրակարգով: Նախատեսված բոլոր հարցերը քննարկվեցին ամենայն պատշաճությամբ ու մտքերի անկեղծ փոխանակմամբ: Միայն մեկ հարցում համայնքի ղեկավարը դեմ արտահայտվեց՝ հայտնելով իր նկատառումը: Ըստ Վաչագան Ադունցի՝ ոչ մի դեպքում չպետք է թույլ տալ, որ խաղահրապարակների ու երեխաների հանգստի համար նախատեսված տարածքներում ավտոտնակների կամ հավելյալ կառույցների համար հողհատկացումներ արվեն:

Այդ բոլորով հանդերձ՝ Գորիս համայնք-Վահե Հակոբյան անսովոր հարաբերությունները չէին կարող անտարբերության արժանանալ ավագանու կողմից:

Ալեկոծված ավագանին շատ հստակ դիրքորոշում արտահայտեց՝ հատուկ ուղերձով դիմել ՀՀ վարչապետին՝ պարզելու՝ արդյո՞ք Սյունիքն ունի մարզպետ, թե՞ ոչ: Եթե այո, ապա ո՞վ է այդ պարոնը, ինչո՞ւ է օտարվել Գորիս համայնքից: Ուղերձով խնդրվում է Կարեն Կարապետյանին՝ Սյունիքի մարզպետին գոնե մեկ անգամ գործուղել Գորիս՝ հաշվետվություն եւ բացատրություն տալու համայնքի իշխանության կոլեգիալ մարմնին՝ ավագանուն: Նա պետք է պատասխանի պարզագույն մեկ-երկու հարցի՝ ո՞ր օրենքի հիման վրա եւ բարոյական ի՞նչ իրավունքով է Գորիս համայնքի ընտրյալ ղեկավարին հրաժարականի պահանջ ներկայացնում, ինչո՞ւ համառորեն Գորիս համայնք չի այցելում (մասնավոր անձանց հետո թաքուն հանդիպումները եւ ծպտված այցերը՝ չհաշված), ինչո՞ւ է Գորիսի հանրության մեջ խառնակչություն եւ անհամերաշխություն սերմանում, ինչո՞ւ Գորիսի առջեւ ծառացած բազում հարցերից որեւէ մեկի լուծմամբ չի զբաղվում:

Ավագանու անդամների՝ բուռն օվացիայով ընդունված ուղերձով միաժամանակ կոչ է արվում մարզի բոլոր համայնքների ավագանիներին, հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվներին՝ հաշվետվության հրավիրելու Սյունիքի մարզպետին. միայն այդպես հնարավոր կլինի կանգնեցնել նրա կամայականությունների շքերթը, քանի դեռ բարձր իշխանությունները քննարկման առարկա չեն դարձրել նրա խեղկատակությունները:

Ավագանին հույս է հայտնել, որ Գորիսում մարզպետի ակնկալվող հաշվետվությանը կմասնակցեն նաեւ ՀՀ տարածքային կառավարման նախարար Դավիթ Լոբյանը, թիվ 12 ընտրատարածքից ԱԺ պատգամավորներ Աշոտ Արսենյանը, Մերուժան Սիմոնյանը եւ Ավետ Սարգսյանը:

Եթե Վահե Հակոբյանը հրաժարվի Գորիսի ավագանուն հաշվետվություն եւ բացատրություն տալուց, ապա չի բացառվում, որ ավագանու մեկ այլ ուղերձով նա կհայտարարվի անցանկալի անձ Գորիս համայնքի ամբողջ տարածքում:

Սեփ.լրատվություն

«Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ. Ինչ կապ ունի այդ ընկերությունը Վահե Հակոբյանի, Միեր Պոլոսկովի հետ եւ ինչո՞վ է իրականում այդ ընկերությունը զբաղվում

էջ 1

Ընկերություն՝ «Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ

Գրանցման ամսաթիվ	2012թ. հոկտեմբերի 5
Իրավաբանական հասցե	Երեւան, Այգեստան 5փ., 15, 0047
Գործունեության հասցե, Երեւան	Երեւան, Սայաթ-Նովա 35-1, 0025
Տնօրեն՝ գրանցման պահին	Միեր Պոլոսկով
Տնօրեն՝ այս պահին	Լուսինե Խաչատրյան (2015թ. սեպտեմբեր 18-ից)

«ՀՀ պետական բյուջե երեք մլն դրամ եւ ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների վերաբերյալ հաշվետվություն»-ից ու «Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների եւ նրանց կողմից վճարված հարկերի եւ տուրքերի մեծությունների» հաշվետվությունների համադրումից հետաքրքրաշարժ իրողություններ ենք պարզում: 2014թ. եւ 2015թ. պետական բյուջե վճարված հարկերը ներկայացված են ստորեւ՝

	2014թ հարկային մարմինների կողմից հավաքված (հազար դրամ)	2015թ. հարկային մարմինների կողմից հավաքված (հազար դրամ)
Ուղղակի հարկեր		
- եկամտային հարկ	169,449	306,616
- այլ ուղղակի հարկեր	22,893	3,813
Անուղղակի հարկեր		270,073
Այլ հարկեր	1,447	503
Ընդամենը	193,789	581,005

2016թ. վերաբերյալ ՀՀ պետական բյուջե 3 մլն դրամ եւ ավելի եկամտային հարկ վճարած հարկային գործակալների վերաբերյալ հաշվետվությունը դեռ չի հրապարակվել: Բայց հաշվի առնելով, որ 2016թ. հարկային մարմիններին վճարած 554 մլն դրամը համադրելի է 2015թ. 581 մլն դրամին, տրամաբանական է ենթադրել, որ 2016թ. պատկերը համանման է:

2015թ. սեպտեմբերի 18-ի ամսաթվով կատարվել է տնօրենի փոփոխություն, ու Միեր Պոլոսկովին փոխարինելու է եկել ոմն Լուսինե Լեւոնի Խաչատրյան՝ ID 007046170, գրանցման հասցե՝ Նոր Նորք, Ն. Ստեփանյան փ., 16/1 շ., 40 բն., 0062: Համացանցում գտնում ենք Լուսինե Խաչատրյանին ու պարզում, որ նա աշխատում է նաեւ որպես ԶՊՄԿ-ի տնօրենի օգնական: Եվ ըստ կայքի՝ նա այդ աշխատանքը համարում է ավելի առաջնային, քան «Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնը: Պաշտոնական կայքից տեղեկանում ենք, որ նրա ծննդյան տարեթիվն է սեպտեմբերի 12, 1979թ.: Հենց այս պահին մի վայրի միտք է հղանում. Վահե Հակոբյանի նոր կինն էլ գրանցված է Նոր Նորքում՝ Նանսենի 1 նրբ. 2 19, ու 1979թ. օգոստոսի 26-ի ծնունդ էր: Այսինքն՝ մի քանի փողոցի տարբերություն: Հավանաբար նաեւ ընկերություն են արել, միգուցե նույնիսկ միեւնույն՝ թիվ 139 միջնակարգ դպրոցն են հաճախել: Եթե ենթադրությունը ճշմարիտ է, ապա դա թույլ է տալիս ենթադրել, որ Վահե Հակոբյանն է վերահսկում, թե 1 միլիարդ դրամ աշխատավարձից ում ինչ բաժին կհասնի:

Մի ընկերություն, որն էական շահույթներ չունի, բայց ունի առնվազն 1 միլիարդ դրամ աշխատավարձի ֆոնդ (սա կարող ենք պնդել՝ ելնելով 306 մլն դրամ եկամտային հարկի վճարման փաստից): Թե ովքեր էին այնտեղից աշխատավարձ ստանում Վահե Հակոբյանից զատ, պարզ չէ, քանզի այդ ընկերությունը մինչ այս որեւէ տեղ չէր երեւացել: Սա չափազանց կասկածելի է, քանզի 1 մլրդ դրամից ավելի աշխատավարձի ֆոնդով ընկերության մասին որեւէ բան պետք է որ հայտնի լիներ հայ հանրությանը: Օրինակ՝ նույն խմբի մեկ այլ ընկերություն՝ «Մաքուր երկաթ գործարան» ԲԲԸ-ն, 2015թ. վճարել է 477,5 միլիոն եկամտային հարկ՝ ունենալով 550-ից ավելի աշխատակից: Հետաքրքիր է՝ քանի՞ աշխատակից ունի «Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ-ն, եւ արդյո՞ք նրանք տեղակայված են Սայաթ-Նովա 35-1 հասցեում, թե՞ իրենց մոտ ուղղակի աշխատանքի չգնալու մշակույթ է քարոզվում, ու այս ընկերության գոյության իմաստը զուտ կողմնակի աչքերից հեռու բարձր աշխատավարձ վճարելն է:

Այսպիսի ընկերության առկայությունն ահռելի կոռուպցիոն ռիսկերի կասկածներ է հարուցում: Ցանկացած պաշտոնատար անձի կնոջը կամ զավակին կարող ես աշխատանքի ընդունել բարձր աշխատավարձով ու դեմքի լուրջ արտահայտությամբ աշխատավարձ վճարել ու դա երբեք կաշառք չանվանել: Այդ է պատճառը, որ հանրությունը պետք է իմանա այդ ընկերությունում գրանցված աշխատողների անուններն ու նրանց գործառույթներն այդ ընկերությունում:

Ստորեւ ներկայացված են փաստարկներ՝ ի պնդում այն բանի, որ այս ընկերությունը միջադիր ընկերություն է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի եւ ինչոր այլ կազմակերպությունների միջեւ ու իրական գործառույթներ չունի, բացի 1 մլրդ դրամ աշխատավարձը «իրացնելուց».

- «Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ տնօրենը ԶՊՄԿ-ի գլխավոր տնօրենի օգնականն է,
- պարզ չէ, թե ինչ գործունեությամբ է զբաղվում կամ ինչ արժեք է ստեղծում «Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» ՓԲԸ-ն, եթե արտադրությունն իրականացվում է առանց իրեն, իսկ գնորդը նախապես հայտնի է: Հարկային մարմիններում որպես գործունեության տեսակ նշված է ոչինչ չասող «Տեխնիկական փորձարկումներ եւ վերլուծություններ այլ բնագավառներում» արտահայտությունը,
- ընկերություն է, որը, ունենալով 1 մլրդ դրամը գերազանցող աշխատավարձի ֆոնդ, չունի որեւէ էական շահույթ,
- այս ընկերությունում աշխատող մեզ հայտնի երեք բարձր պաշտոն զբաղեցնող անհատներն էլ՝ Միեր Պոլոսկով (նախկին տնօրեն), Վահե Հակոբյան (կոմերցիոն տնօրեն) եւ Լուսինե Խաչատրյան (ներկայիս տնօրեն), այնտեղ աշխատել են համատեղությամբ՝ դրանք համատեղելով նաեւ ԶՊՄԿ-ում աշխատանքի հետ,
- գերմանական «Քրոնիմետ» ընկերության կայքում «Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս»-ի գործունեության վայր է նշված քաղաք Քաջարանը, այլ ոչ Երեւան, Սայաթ-Նովա 35-1, ինչպես նշված է պաշտոնական փաստաթղթերում:

Հ.Գ. Մի փաստ էլ՝ մինչ 2016թ. հոկտեմբերի 20-ը (դիմումը ներկայացվել է հոկտեմբերի 18-ին) Վահե Հակոբյանը հանդիսացել է «Իստ գեյթ ռեսուրսես» ՍՊԸ-ի տնօրենը, այսինքն՝ 2016թ. հոկտեմբերի 6-ին նշանակվելով Սյունիքի մարզպետ՝ նա դեռ աշխատում էր առեւտրային ընկերությունում:

ԱՐԹՈՒՐ ՕՐԲԵԼՅԱՆ

«Սյունյաց երկիր» թերթի հատուկ համարը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ուշադրության կենտրոնում

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտն առանձին գրքով հրատարակել է «Սյունյաց երկիր» թերթի՝ Մորուս Հասրաթյանին նվիրված համարը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, առանձին գրքով հրատարակվել է «Սյունյաց երկիր» թերթի 2016թ. հունիսի 30-ի համարը՝ նվիրված նշանավոր սյունեցի, ականավոր պատմաբան ու բանասեր Մորուս Հասրաթյանին:

Գիրքը հասցեագրված է պատմաբաններին, հնագետներին, բանասերներին, արվեստաբաններին, ինչպես եւ ընթերցող լայն շրջաններին:

Գիրքը սկսում է Սամվել Ալեքսանյանի հեղինակած խմբագրականով, որը ներկայացնում ենք ստորեւ:

Նշանավոր սյունեցին, ականավոր պատմաբանն ու բանասերը

Շարունակում ենք ներկայացնել Սյունյաց աշխարհի այն զավակներին, ովքեր սուրբ եւ բազմերանելի մարդու՝ Մաշտոցի՝ Սյունիք գալուց եւ տերունական մեր երկրամասը կրկին լուսավորելուց հետո դարեր ի վեր վառ պահեցին այդ լույսը:

Մեսրոպի ու նրա ընտրյալ աշակերտներ Բենիամինի ու Անանիայի հիմնադրած առաջին դպրոցները Սյունիքում այնքան զորավոր գտնվեցին, որ նրանց ճառագայթները, անգամ պատմության դժնդակ ժամանակներում, սփռվեցին ամբողջ Հայաստանով մեկ եւ յուրօրինակ կանթեղ եղան հայոց մեջ:

Խոսքը, նախեւառաջ, այդ դպրոցների մեծահամբավ ուսուցիչների եւ նույնքան համբավավոր աշակերտների մասին է, ապա եւ Սյունյաց (Շաղատի) վարդապետարանի ու Գլաձորի, Տաթեւի համալսարանների անզուգական քերթողների մասին, ովքեր հայոց միտքը մի նոր աստիճանի բարձրացրին:

Խոսքը դրանց հաջորդած ժամանակների գրիչների ու ծաղկողների մասին է եւ, իհարկե, Սյունյաց մեծ անապատի լուսավորիչների մասին:

Խոսքը, ի վերջո, գրողների ու բանաստեղծների, երաժիշտների ու գիտնականների, պատմաբանների ու բանասերների, նշանավոր զորավարների ու պետական գործիչների մի ամբողջ բույլի մասին է, որի արժանավոր ներկայացուցիչներին տեսնում ենք նաեւ 20-րդ դարում:

Ամենայն իմաստնությամբ ու կատարյալ գիտությամբ լի այդ երեւելիների շարքում է գիտության բարձունքներին հասած, իմացության լույսով պայծառացած մի անհատականություն, ում անուն-ազգանունն է Մորուս Հասրաթյան՝ հմտացած պատմագիտության, հնագիտության, մանկավարժության, բանասիրության եւ հատկապես սայաքնովագիտության մեջ:

«Սյունյաց երկիր» թերթի սույն համարը Մորուս Հասրաթյանին հիշելու, նրա գիտական ժառանգությանը նորովի հաղորդվելու ու նրա պայծառ հիշատակի առջեւ խոնարհվելու քայլ է:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՄՈՒՐԱԴ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ. դատավո՞ր, թե՞ անգրագիտության անձեռակերտ հուշարձան

էջ 7

նատերերը դիմել են ՀՀ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին՝ ոչ միայն իրենց բնակարանը վերադարձնելու, այլեւ Մուրադի անգրագիտությունից, կամայականությունից ու ախորժակից Գորիսը փրկելու խնդրանքով: Դիմել են նաեւ ՀՀ վարչական դատարան՝ ԴԱՀԿ-ի որոշումը վիճարկելու համար:

Հիմա այն մասին, թե ինչու է այս դեպքում Մուրադի կայացրած վճիռն ընկալվում իբրեւ անգրագիտության եւ ախմախության դասական նմուշ:

Մինչեւ հիմա մեզ՝ միամիտներիս, թվացել է, թե ՀՀ սահմանադրության դրույթներն անքննելի են ու ենթակա են պարտադիր կատարման: Իսկ Սահմանադրությունը խնդրո առարկա այս հարցի վերաբերյալ ասում է. *«1. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք:*

2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հասարակական կարգի, առողջության եւ բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով» (Հոդված 32):

Մուրադը շրջանցել է Հայաստանի երրորդ հանրապետության սահմանադրությունը. չենք կարող ասել՝ ծանո՞թ չէ երկրի հիմնական օրենքին, թե՞ բնավորության համաձայն շրջանցել է այն:

Մուրադի մուրադությունը, սակայն, դրանով չի ավարտվել. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 132/1-ը սահմանում է, որ դատարանի վճռի պարզաբանական մասում անպայման նշվեն *«...այն օրենքները, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը եւ այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս»:* Դատավոր կոչված այդ պարոնը շրջանցել է նաեւ օրենքի այդ պահանջը: Ընթերցեք, խնդրեմ, դատարանի վճիռը (ՍԴ3/0147/02/11 քաղաքացիական գործ) եւ չեք գտնի գոնե մեկ հղում գործող օրենքներին: Ասել է թե՝ Մուրադը գրել է այն, ինչ բրդել են սեփական ուղեղն ու պատկերացումները, սեփական հետաքրքրություններն ու շահերը: Իսկ միգուցե ինքը պատվե՞ր է կատարել, ինչպես սովորաբար կատարում է:

Երկու շատ կարեւոր հանգամանք եւս, որ նույնպես շրջանցել է Մուրադը՝ *ա) վաճառած բնակարանը գրավի առարկա չի եղել, բ) վաճառած բնակարանը սեփականատեր մարդկանց միակ կացարանն է եղել:*

Այդ ամենից հետո բնակարանի համասեփականատերերն ակնկալում են, որ իրենց սեփական բնակարանը կվերադարձվի ու կպարզվի, թե ինչ խաղերի ու կամայականությունների հետեւանքով են զրկվել բնակարանից:

Համասեփականատերերն ակնկալում են նաեւ, որ ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ արդարադատության խորհուրդը, ՀՀ դատական դեպարտամենտը եւ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը կպարզեն, թե ինչի հիման վրա է Մուրադ Հովակիմյան դատավորը կայացրել ապօրինի այդ վճիռը, եւ արդյո՞ք նրա ինտելեկտուալ մակարդակը համապատասխանում է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավորին ներկայացվող պահանջներին:

Յ.Գ. *Հետաքրքիր է, ի՞նչ կանի Մուրադը, եթե իրենից խլեն իր իսկ սեփական բնակարանը եւ փոխարենը տան 166.000 դրամ:*

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Վարդան Մամիկոնյանի գերեզմանի հետքերով

«Երկիր եւ մշակույթ» համազգային կազմակերպության նախաձեռնությամբ Անգեղակոթ գյուղում տեղի ունեցավ բաց քննարկում՝ նվիրված Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղորոշման խնդրին: Քննարկման առարկա էր Անգեղակոթի Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցին, որտեղ, ըստ ավանդության եւ անվանի գիտնական Մորուս Հասրաթյանի հետազոտության, ամփոփված է հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի աճյունը:

Այդ կնճռոտ հարցին փորձել է պատասխանել Մորուս Հասրաթյանը՝ իր տեսակետը շարադրելով «Որտե՞ղ է թաղված Վարդան Մամիկոնյանը» հոդվածում: Ինչեւէ, քննարկման նպատակն էր մեկտեղել խնդրի շուրջ եղած կարծիքները, վերլուծել շոշափվող թեմայի համատեքստում Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցու դերը եւ շրջակայքի հնագիտական ներուժը, նախատեսվող հետազոտությունների արդիականությունը: Քննարկմանը մասնակցում էին պատմաբաններ, հնագետներ, աղբյուրագետներ, ճարտարապետներ, մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ: Մինչեւ քննարկումը սկսվելը, նրանք եղան Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցում, Վասակ Սյունու ենթադրյալ գերեզմանում:

Պատմական հուշարձանները վերականգնող ճարտարապետ, «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության Հայաստանի կառույցի ղեկավար Ստեփան Նալբանդյանը միջոցառման ներածական խոսքում նշեց, որ քննարկման հիմքում Մորուս Հասրաթյանի առաջ քաշած գիտական վարկածն է, հրապարակի վրա այլ բան չկա, մյուսներն ավանդապատումների մակարդակով զրույցներ են անում Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղի վերաբերյալ: Նախքան քննարկումը սկսվելը, պատմական միջավայրի պահպանության Սյունիքի մարզային ծառայության պետ Աստղիկ Հակոբյանը ներկայացրեց Անգեղակոթի պատմաճարտարապետական հուշարձանները, նաեւ տեղեկություններ հայտնեց Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցու մասին:

«Մորուս Հասրաթյանի գիտական վարկածը, Անգեղակոթի Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցու եւ պահպանված հուշակոթողների դերն ու կարեւորությունը Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղորոշման համատեքստում», – այսպես էր կոչվում հնագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Տիգրան Ալեքսանյանի զեկուցումը: Բանախոսը, անդրադառնալով Վարդան Մամիկոնյանի գերեզմանի տեղորոշման խնդրին, նշեց, որ դրանով մանրամասն զբաղվել է Մորուս Հասրաթյանը, ում կարծիքով նշանավոր զորավարը կարող էր թաղված լինել Անգեղակոթի Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցում՝ վաղմիջնադարյան Սյունիքի հոգեւոր եւ քաղաքական կենտրոն Շաղատի հարեւանությամբ: Այս նպատակով գիտնականը մանրամասն քննություն է առել Վարդանանց պատերազմին վերաբերող մատենագրական տվյալները, քննվող ժամանակաշրջանի քաղաքական իրադրությունը, հայոց զորքերի շարժը եւ դրանց հնարավոր ուղիները, նահատակված սպարապետի մարմինն Անգեղակոթում հուղարկավորելու շարժառիթները եւ այլն: Կատարված հետազոտությունները առավել փաստարկված լինելու նպատակով 1960-ական թվականներին Մորուս Հասրաթյանը նաեւ կարծատեւ պեղումներ է իրականացրել խնդրո առարկա հնավայրում: Բանախոսի կարծիքով՝ պատմիչների լռությունը, ինչպես նաեւ պատմական Հայաստանի տարածքում պահպանված եւ սուրբ Վարդանի անվան հետ կապվող մի շարք հուշարձանները պատճառ են դարձել նրա գերեզմանի տեղորոշման հարցում առկա տարաձայնությունների համար: Պեղումների շնորհիվ հայտնաբերվել են վաղմիջնադարյան Հայաստանում տարածված հուշակոթող-մահարձանի մնացորդներ, որոնց մասին իր զեկուցման մեջ խոսեց հնագետ Արման Նալբանդյանը:

Խնդրո առարկային առնչվող իրենց կարծիքը հայտնեցին քննարկման ներկա հնագետներն ու ճարտարապետները: Աղբյուրագետ Ալեքսան Հակոբյանը մանրամասն ներկայացրեց Ավարայրի ճակատամարտի ընթացքը:

– Պեղումներ պիտի կատարվեն, կգտնվե՞ն Վարդան Զորավարի մասունքները, թե՞ ոչ, մեծ ողբերգություն չէ, կարեւորն այն է, որ կվերականգնվի պատմական հուշարձանը՝ Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցին, կբարեկարգվի ճանապարհը: Մենք ողջունում ենք ծրագիրը եւ մեր ուժերի սահմաններում պիտի օժանդակենք, որ այն իրականանա, - ասաց նախիջեւանագետ Արգամ Այվազյանը:

Մասնավորապես այն միտքը հայտնվեց, որ Սուրբ Վարդան Զորավոր եկեղեցին խիստ վտանգված ճարտարապետական կառույց է՝ կարոտ լուրջ վերանորոգման, հատկապես՝ տանիքը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ բաժնետերերը հրավիրվում են մասնակցելու «Կապանի մեքենաշինական գործարան» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին, որը տեղի կունենա ընկերության վարչական շենքում (ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 20) 2017թ. հունիսի 30-ին ժամը 16.00-ին:

Տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու վերջին ժամկետը՝ 26.06.2017թ. ժամը 11.00-ն է:

Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված են հետեւյալ հարցերը.

1. Ընկերության գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը:
2. Ընկերության գործունեության հաշվետվությունների, հաշվեկշռի, շահույթների եւ վնասների հաշվի հաստատում:
3. Շահույթների եւ վնասների բաշխման հաստատում:
4. Խորհրդի ընտրություն եւ վերահսկիչ հանձնաժողովի ընտրություն:
5. Շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունում:
6. Աուդիտորի ընտրություն:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում, օրակարգային հարցերին վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու եւ ստանալու համար բաժնետերերը կարող են դիմել ընկերության խորհրդին (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 20) հունիսի 20-ից մինչեւ 27-ը, աշխատանքային օրերին ժամը 11.00-ից մինչեւ 15.00-ն:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 30.06.2017թ.: